ՄԵ՛ՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

Զարգացման գործակալություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

2024

ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ
Զարգացման
գործակալություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



«Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալությունը հիմնադրվել է 2022 թվականի վերջին Ռուբեն Վարդանյանի և իր գործընկերների կողմից՝ նպատակ ունենալով իրականացնել Արցախի և Սյունիքի զարգացման և աջակցության ծրագրեր: 2022-2023 թվականների ընթացքում կազմակերպությունն իրա-կանացրել է ավելի քան **2,000,000 ԱՄՆ դոլար** արժո-ղությամբ ծրագրեր, որոնց մասին հաշվե-տվությունը հասանելի է այս հղումով:

Չնայած այն հանգամանքին, որ կազմակերպության հիմնադիր Ռուբեն Վարդանյանը, 2023 թվականի սեպտեմբերի 27-ին, Արցախից մասսայական տեղա-հանության ժամանակ ապօրինի ձերբակալվել է ադրբեջանական ուժայինների կողմից և մինչ օրս գտնվում է գերության մեջ Բաքվում, հավատարիմ մնալով իր հումանիստական սկզբունքներին, նա պնդել է շարունակել կազմակերպության բարեգործական գործունեությունը Արցախի ժողովրդին աջակցելու համար: 2023 թվականի հոկտեմբերից «Մենք ենք մեր սարերը» շարունակել է օգնել Արցախից բռնի տեղա-հանված ընտանիքներին վերականգնվել ծանր ցնցումներից և արժանապատվորեն հարմարվել նոր իրողություններին՝ նպաստելով նրանց սոցիալական զարգացմանը և ապահովելով տնտեսական կայու-նություն: Բացի այդ, կազմակերպությունը ձգտում է հնարավորություն տալ տեղահանված մարդկանց իրացնել իրենց ներուժը Հայաստանում:

2024 թվականի մարտին կազմակերպությունը փոխել է իր անունը՝ դառնալով «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալություն:

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործա-կալությունը 2024 թվականին իրականացրել է շուրջ 350,000 ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրեր և նախագծեր, որոնք ազդել են շուրջ 9 000 մարդու կյանքի վրա Հայաստանի տարբեր մարզերում:

Ստորև ներկայացված են հաշվետու ժամանակա-շրջանում «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության կողմից իրականացված ծրագրերը՝ մանրամասն տեղեկություններով ծախսված միջոցների, իրականացման աշխարհագրության և շահառուների թվի մասին:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՑԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ

Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներից շատերը հայրենի երկրամասում զբաղվել են արհեստներով՝ պահպանելով ընտանեկան ավանդույթները և փոխանցելով իրենց հմտությունները սերնդեսերունդ: «Աջակցություն Արցախի վարպետներին» նախագիծը նպատակ ունի օգնել արցախցի վարպետներին հնարավորինս արագ վերականգնել իրենց գործունեությունը Հայաստանում և բարելավել իրենց ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի շրջանակներում արհեստավորների համար կազմակերպվել են մասնագիտական վերապատրաստման և կատարելագործման դասընթացներ, տրամադրվել են աշխատանքի համար անհրաժեշտ գործիքներ՝ ընդհանուր առմամբ յուրաքանչյուրին մինչև **1,300 ԱՄՆ դոլար** արժողությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է ստացել **103 արհեստավոր**, այդ թվում դերձակներ, ոսկերիչներ, կոշկակարներ, զոդողներ, բրուտագործներ, ատաղձագործներ, դարբիններ, որմնադիրներ, հրուշակագործներ, կահույքա-գործներ, վերանորոգողներ, վարսահարդարներ, գորգագործներ և այլն: Նրանցից **28-ն** անցել է մասնագիտական վերապատրաստման դասընթաց:

Նախագիծը հիանալի հնարավորություն էր արհեստավորների համար ոչ միայն վերսկսելու իրենց գործունեությունը, այլև կապեր հաստատելու միմյանց հետ, ինչը նպաստեց նրանց միավորմանը և փոխադարձ աջակցությանը:

Վրեժի նոր դարբնոցը

Արցախցի նախկին զինվորական Վրեժը թոշակի անցնելուց հետո հավաքել է վարպետների և Ստեփանակերտում բացել արհեստանոց, որտեղ հիմնականում կատարել են եռակցման աշխատանքներ:

Հարկադիր տեղահանման պատճառով Վրեժը Ստեփանակերտում թողել է ոչ միայն իր տունն ու այն ամենը, ինչ երկար տարիների ընթացքում ստեղծել է քրտնաջանորեն, այլև գործիքներն ու սարքավորումները, որոնք իր ընտանիքի ապրուստի հիմնական միջոցն էին:

Ապաստան գտնելով Հայաստանում և կանգնելով նոր մարտա-հրավերների առաջ՝ Վրեժը որոշել է, որ պետք է իր մեջ ուժ գտնի և նորովի սկսի իր գործը: Հավաքելով իր թիմի անդամներին Հայաստանի տարբեր քաղաքներից՝ նա սկսել է բառացիորեն ձեռքով կռել երկաթը՝ համապատասխան սարքավորումների ու գործիքների բացակայության պատճառով:

Վրեժն ու իր գործընկերները դարձել են «Աջակցություն Արցախի արհեստավորներին» ծրագրի շահառուներ և ստացել անհրաժեշտ գործիքներ: «***Յուրաքանչյուր գործիք մեկ աշխատանքային տեղ է***»,- ասում է Վրեժը: Նոր դարբնոցում նախնական հաջողությունների հասնելով՝ Վրեժն ու իր թիմը ընդլայնել են իրենց գործունեությունը և արդեն ավելի մեծ պատվերներ են ստանում:

Կահույքագործ Նարեկը և իր «արցախյան թիմը»

Փորձառու կահույքագործ Նարեկը և նրա թիմը հաջողությամբ գործում էին Արցախում մինչև տարածաշրջանից բռնի զանգվածային տեղահանումը: Հայաստան հասնելուն պես նրանք, ինչպես և շատ այլ տեղահանվածներ, կանգնեցին նոր մարտահրավերի առաջ՝ սկսել զրոյից: ***«Արցախում մենք մեծ արտադրամաս ունեինք»,- հիշում է Նարեկը: — «Դժվարությամբ Հայաստան հասնելով՝ սկսեցինք մտածել այստեղ արտադրությունը վերականգնելու մասին: Բայց մենք գործնականում ոչինչ չունեինք՝ ամբողջ տեխնիկան, սարքավորումները, գործիքները մնացել էին Արցախում: Որոշեցինք ռիսկի դիմել ու սկսել փոքր քայլերից»:***

Երկու ամիս անց Նարեկը տեղեկացել է «Մենք ենք մեր սարերը» գործակալության կողմից կազմակերպված «Աջակցություն արցախցի վարպետներին» ծրագրի մասին: Հայտը ներկայացնելով, նրանք կարճ ժամկետում ստացել են անհրաժեշտ օգնությունը, ինչը թույլ է տվել ձեռք բերել գործիքներ և սարքավորումներ՝ արտադրությունը վերսկսելու համար: Թեեւ դեռ շատ բան կա գնելու, բայց Նարեկի թիմն արդեն լավ արդյունքների է հասել:

«Մենք ձեռք բերեցինք մեզ անհրաժեշտ սարքավորումների 40%-ը, և սա նշանակալի քայլ էր մեզ համար»,- կիսվում է նա:

Այս աջակցությունը Նարեկին թույլ տվեց նաև հետ բերել իր արհեստավորներից շատերին՝ առաջարկելով նրանց աշխատանք և կայունություն նոր միջավայրում: Թիմն արդեն կայացել է իր արտադրանքի բարձր որակի և օպերատիվ սպասարկման շնորհիվ: ***«Արցախի թիմը հենց մեր ապրանքանիշն է»,-*** հպարտությամբ ասում է Նարեկը: ***— «Մենք հայտնի ենք որպես բարձրորակ կահույք արտադրող արցախցիների թիմ»:***

Լիլիթի նոր մասնագիտությունը

«Այն բանից հետո, երբ մեզ ստիպեցին լքել Արցախը, բոլորիս զգացմունքները խառն էին: Չգիտեինք, թե ինչ կլինի հետո, ինչպես կդասավորվի մեր կյանքը... Սկզբում տատանվում էինք՝ կարո՞ղ ենք ինչ-որ բան սկսել զրոյից: Բայց ի վերջո որոշեցինք, որ ցանկացած բիզնես սկսելը ռիսկ է: Մենք ռիսկի դիմեցինք, և ստացվեց»,- ասում է վարսահարդարման և մազերի խնամքի վարպետ Լիլիթը:

Նրա առաջին մասնագիտությունը տնտեսագիտությունն է: Արցախում Լիլիթն աշխատել է «ԱրցախԷներգո» ընկերությունում: Բռնի տեղահանվելուց հետո նա սկսել է մտածել այնպիսի աշխատանք գտնելու մասին, որը թույլ կտար իրեն մոտ լինել իր երեխաներին: Նա փորձել է աշխատանքի անցնել մանկապարտեզում որպես պարուսույց, սակայն դրական պատասխան չստանալով՝ որոշել է վարպետանալ վարսավիրական գործում:

«Ես գործիք չունեի, զրոյից սկսելը շատ դժվար էր: Բայց ուսման ընթացքում տեղեկացա «Մենք ենք մեր սարերը» կազմակերպության՝ արհեստավորներին աջակցելու, այդ թվում՝ գործիքներ տրամադրելու նախագծի մասին: Անկեղծ ասած, ես չէի հավատում, բայց և այնպես գրանցվեցի: Հետո, մի օր նրանք ինձ զանգեցին և ասացին.

«Եկե՛ք, ընտրե՛ք ձեր գործիքները»: Ես դեռ կասկածներ ունեի, բայց երբ տեսա, որ դա իրական է, դա ինձ համար հսկայական օգնություն դարձավ: «Գործիքները ստացել եմ դեկտեմբերի 30-ին և հունվարի 10-ից արդեն աշխատում էի»,- խոստովանում է Լիլիթը:

Լիլիթը պարզապես վարսահարդար չէ, նա նոր սերնդի մասնագետ է, ով տիրապետում է մազերի բուժման և վերականգնման հմտություններին: Այս մասնագիտությունը, որը մեր օրերում հայտնի է որպես treatmentolog, ավելի տարածված և պահանջված է: «Աջակցություն Արցախի վարպետներին» ծրագրի շնորհիվ Լիլիթը հնարավորություն ստացավ կատարելագործել իր հմտությունները և շարունակել աշխատել նոր ոլորտում, ինչը նրա համար բացեց նոր հորիզոններ այս մասնագիտության մեջ: Լիլիթն արդեն մեկ տարի է, ինչ աշխատում է իր նոր մասնագիտությամբ, և ունի երազանք՝ բացել սեփական դպրոցը: ***«Ես ուզում եմ ուրիշներին սովորեցնել այս գործը: Սա պահանջված մասնագիտություն է, ցանկացած տեղ կարող ես աշխատել»,-*** ասում է նա՝ հավելելով. ***«Հուսով եմ՝ կվերադառնանք Արցախ: Չգիտեմ՝ երբ, բայց մենք պետք է մնանք այստեղ, որպեսզի հետո վերադառնանք և հետ բերենք Արցախը»:***

«Աջակցություն Արցախի վարպետներին» նախագիծը միտված է օգնելու արցախցի վարպետներին իրացնել իրենց ներուժը Հայաստանում և չհեռանալ արտագնա աշխատանք փնտրելու համար:

2024 թվականին ծրագրի արժեքը կազմել է ավելի քան **90,000 ԱՄՆ դոլար**: Ծրագիրն իրականացվել է «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան», «Սուրբ Սարգիս բարեգործական հիմնադրամի», Ստեփան Գևորգյանի և «Noah's Children բարեգործական հիմնադրամի», ինչպես նաև կազմակերպության ընկերների և աջակիցների նվիրատվությունների շնորհիվ:

Հաշվի առնելով ծրագրի շոշափելի ազդեցությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև Արցախից տեղահանվածների մեծ պահանջարկը, նախատեսվում է այն շարունակել և ընդլայնել 2025 թվականին:

«ԹԵՎԵՐ» վերականգնողական ծրագիր արցախից բռնի տեղահանված երեխաների և նրանց ծնողների համար

«Թևեր ստանալու ամենահեշտ ձևը թևեր նվիրելն է մեկին, ով դրանց կարիքն ունի»:

2023 թվականին Դիլիջանում իրականացված **«ԹԵՎԵՐ»** վերականգնողական ծրագրի փորձնական փուլի հաջողությունը խթան հանդիսացավ գործակալության համար՝ շարունակելու դրա իրականացումը 2024 թվականին: Ծրագիրն ուղղված է 4-ից 18 տարեկան Արցախից բռնի տեղահանված երեխաների համալիր վերականգնմանը: Նվիրատուների աջակցության շնորհիվ գործակալությունը 2024 թվականին ոչ միայն շարունակեց ծրագիրը Դիլիջանում, այլև ընդլայնեց իր աշխարհագրությունը՝ հնարավորություն ընձեռելով գյումրեցի 48 երեխաների և նրանց ծնողներին մասնակցելու ծրագրին: Ընդհանուր առմամբ, **2024 թվականին «ԹԵՎԵՐ»** ծրագրին մասնակցել են Դիլիջանում և Գյումրիում բնակվող **222 երեխա և նրանց ծնողները**:

Ծրագրի նպատակն է վերականգնել երեխաների ֆիզիկական, հոգեբանական և մտավոր ռեսուրսները, ինչպես նաև բարելավել նրանց ծնողների հոգեբանական վիճակը: Ծրագրի հիմնական բաղադրիչներից բացի (արտ-թերապիա, սպորտ, ճկունություն և առաջնորդության հմտություններ), ավելացվել են սոցիալական ներառման տարրեր, ինչպիսիք են համայնքային միջոցառումները, ճանաչողական էքսկուրսիաները և արշավները, որպեսզի երեխաներին հնարավորություն ընձեռվի ավելի լավ ծանոթանալ իրենց նոր շրջապատին: Ծնողները ստացել են նաև անհատական թերապիա:

Ծրագրի հիմնական գործընկերներն էին.

- **Դիլիջանի համայնքային կենտրոնը**
- **Զբոսաշրջության և քաղաքաշինության հիմնադրամը (TUF)**
- **«Climate Uturn» կրթական հարթակը**

Հոգեախտորոշիչ գնահատականների և ծնողների արձագանքների հիման վրա պարզ դարձավ, որ երեխաները բախվում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են անքնությունը, անհանգստությունը, վախը, անորոշությունը, անվստահությունը, հուսահատությունը, սթրեսը և հուզական անկայունությունը: «ԹԵՎԵՐ» ծրագրի համապարփակ միջամտությունները և նպատակաուղղված ջանքերը զգալիորեն մեղմացրել են այս մարտահրավերները, և ծրագրի ավարտին երեխաների մեծ մասը զգալի ձեռքբերումներ է ունեցել հոգեբանական բարեկեցության առումով, ինչը ցույց է տալիս աճող ճկունությունը և ապագայի հույսը (տես գծապատկերը)*.



** Ներառում է Դիլիջանում իրականացված փուլերի տվյալները*

«ԹԵՎԵՐ» ծրագրի լրացուցիչ բաղադրիչը ընտանիքների հոգեբանական ապաքինումն էր անհատական և խմբակային թերապիայի միջոցով: Թերապիա անցած ծնողների 70%-ի մոտ հոգեբանական վիճակը կայունացել է, իսկ մնացածները ցանկություն են հայտնել շարունակել աշխատել մասնագետների հետ:

Հարցման արդյունքները նաև ցույց տվեցին, որ ծրագրի ամենահայտնի և պահանջված բաղադրիչը սոցիալական ինտեգրումն է, որը ներառում է ճանաչողական էքսկուրսիաներ, համայնքային միջոցառումներ և արշավներ, ինչը երեխաներին թույլ է տալիս ճանաչել ու ավելի լավ հարմարվել իրենց նոր բնակավայրին:

«ԹԵՎԵՐ» ծրագրի վերջնական նպատակը դուրս է մասնակիցների վրա անմիջական ազդեցության շրջանակներից: Ծրագիրը նպատակ ունի ստեղծելու ապաքինման և կայունության ալիքային էֆեկտ՝ կանխելով տրավմայի փոխանցումը ապագա սերունդներին:

Ծրագիրն իրականացվել է Կրթության խթանման «Դար» բարեգործական հիմնադրամի և «Սատար Արցախին» միության (Ֆրանսիա) զգալի աջակցության, ինչպես նաև կազմակերպության ընկերների անհատական նվիրատվությունների շնորհիվ:

Ծրագրի ընդհանուր ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմել է մոտավորապես **109,400 ԱՄՆ դոլար**:

ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնակից 1

«Շնորհակալություն, «Թևեր» ծրագրին, որ մեզ երջանկացրին»:

Մասնակից 2

«Մենք՝ ամեն ինչի միջով անցած երեխաներս, սովորել ենք, որ դժվարին իրավիճակներում երբեք չպետք է հուսահատվել»:

Մասնակից 3

«Ինձ համար կարևոր էր նկարել իմ վախերը և դրանք կիսել ուրիշների հետ: Այդպես դրանք մեր մեջից դուրս եկան»:

Մասնակցի մայր

«Այն վերաբերմունքը, որ դուք ցույց տվեցիք մեզ, իսկապես մեծ թևեր տվեց մեզ առաջ գնալու, չկոտրվելու, հույսով ապրելու»:

3 ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ «ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ՝ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ»

2022 թվականին Ռուբեն Վարդանյանը «Մատենա» Առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոցի հետ նախաձեռնել և իրականացրել է «Առաջնորդություն և մոտիվացիա» ծրագիրը Արցախի Հանրապետության պետական կառույցների ղեկավարների և մասնավոր հատվածի համար: Ծրագիրը շարունակվել է անգամ Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման ժամանակ՝ առցանց ձևաչափով:

Արցախի ժողովրդի՝ պատմական հայրենիքից բռնի տեղահանումից հետո, «Մենք ենք, մեր սարերը» գործակալության նախաձեռնությամբ, «Մատենա» Առաջնորդության և Մասնագիտական Զարգացման Միջազգային Դպրոցի փորձագետների և շրջանավարտների, Հայաստանի մարզչական միջազգային ֆեդերացիայի, ինչպես նաև Հարվարդի և Օքսֆորդի շրջանավարտների համատեղ ջանքերով ծրագիրը շարունակվել է Հայաստանում, ստանալով Leaders-2-Leaders անվանումը:

Leaders-2-Leaders-ը շարունակական զարգացման ծրագիր է Արցախից բռնի տեղահանված ապագա առաջնորդների համար: Ծրագրի նպատակն է նպաստել խորացված ուսուցման և վերապատրաստման համապարփակ գործընթացներին, բարձրացնել ծրագրի մասնակիցների մրցունակությունը աշխատաշուկայում, աջակցել նրանց ձեռնարկատիրական նախաձեռնությունների զարգացմանը և, ամենակարևորը, ստեղծել համախոհ առաջնորդների հուսալի ցանց:

Ծրագրի առաջին մոդուլը կազմակերպվել է 2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: 2024 թվականին ծրագիրը շարունակվել է, գործարկվել են երկու նոր ծրագրային մոդուլներ՝ «Ապագայի կառուցում և նպատակների սահմանում» և «Աշխատանքի ու զբաղվածության խթանում»: Ծրագրի **25 մասնակիցներ** ստացել են ավարտական վկայականներ:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի **մասնակիցների մոտ 70%-ը** կարողացել է աշխատանք գտնել:

Ծրագրի բյուջեն կազմել է մոտավորապես **22 900 ԱՄՆ դոլար**, որը տրամադրվել է մարզիչների կողմից՝ անվարձահատույց:

ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԴԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրիստինա

«Արցախից հարկադրված տեղափոխվելուց հետո, աշխատանք գտնելով Երևանում և ղեկավար պաշտոն ստանձնելով, առաջին վեց ամիսներին ես ինձ շատ անվստահ էի զգում և նույնիսկ մտածում էի աշխատանքը թողնելու մասին: Բայց այս նախագծի շնորհիվ ես հաղթահարեցի իմ վախերը, ձեռք բերեցի ինքնավստահություն և հասա աշխատանքի հաջողությունների»:

Ամալյա

«Այս ծրագիրը հարթակ է դարձել մեր աճի համար: Մենք հրաշալի թիմ ենք դարձել, և ես կցանկանայի, որպեսզի այս ծրագիրը շարունակվեր»:.

«ԿԵՆԱՑ ԾԱՌ». ՏԱԹԵՎՈՒՄ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ ՀԻՄՆՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ է վերակենդանացնել Սյունիքի հոգևոր կենտրոնը, որպեսզի ամբողջ ռեգիոնը զարգանա նրա շուրջը, ինչպես դա եղել է հազար տարի առաջ:

Ռուբեն Վարդանյան



Շարունակելով Ռուբեն Վարդանյանի ծրագրերը Տաթևում և արտահայտելով նրա բարեգործական առաքելության շարունակականությունը՝ «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործա-կալությունը գործընկեր կազմակերպու-թյունների հետ համատեղ իրականա-ցրել է «Կենաց ծառ» նախաձեռ-նությունը: Նախաձեռնության շրջանա-կում Տաթևի վանքի և «Տաթևեր» ճոպանուղու հարևանությամբ հիմնվել է **1 000 պտղատու ծառերով** նոր այգի: Տաթևի սրտում գտնվող այս այգին եզակի է նրանով, որ դրա ստեղծմանը մասնակցել են շուրջ **300 անհատ բարերարներ 23 երկրներից** և մեկ տասնյակից ավելի կազմակերպու-թյուններ՝ տնկելով իրենց ծառերը և համախմբվելով բարեգործական գա-ղափարի շուրջ:

Այսօր, երբ մեր կազմակերպության հիմնադիր Ռուբեն Վարդանյանը գտնվում է Բաքվի բանտում, ավելի քան կարևոր է շարունակել նրա գործը, իրականացնելով իր գաղափարները: Վարդանյանի համար այգի ստեղծելը միշտ եղել է բարություն արարելու, նոր սկիզբի խորհրդանիշ, ինչի համար էլ նախաձեռնվել է այս նախագիծը:

Գրիգորի Մարտիրոսյան

«Մենք ենք մեր սարերը» Զարգացման գործակալության գլխավոր տնօրեն

Մայիսի 25-ին տեղի ունեցավ **ուխտագնացություն Տաթևի վանք և համատեղ աղոթք** Սուրբ Պետրոս-Պողոս տաճարում՝ Բաքվի բանտերում պահվող Ռուբեն Վարդանյանի և մյուս հայ գերիների ազատ արձակման համար: Ուխտագնացությանը մասնակցել է ավելի քան **1000 մարդ** Հայաստանի տարբեր մարզերից և արտերկրից:

Նույն օրը տեղի ունեցավ այգու բացման հանդիսավոր արարողությունը, իսկ վանքի հարևանությամբ տնկվեց «Կենաց ծառը»՝ հայ ժողովրդի հարատևությունը, տոկունությունն ու արարչագործությունը խորհրդանշող սոսի:

Տաթևը հայոց հոգևոր և ազգային-ազատագրական վերածննդի խորհրդանիշներից է: Այսօր շատ կարևոր է ներշնչանք և ուժ ստանալ մեր ազգային-հոգևոր ակունքներից՝ մեր նոր զարթոնքի համար: Մեր խոցված ազգային արժանապատվությունը վերականգնելու, հուսահատությունների ու հիասթափությունների կորստաբեր շղթան կոտրելու համար նաև խիստ կարևոր է Բաքվում պահվող մեր գերիների շուտափույթ և ապահով վերադարձը հայրենիք:

Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյան

Որպես ուխտագնացության համակազմակեր-պիչներ նախաձեռնությանը միացել են Հայ Առաքելական եկեղեցին, Տաթև համայնքը և այնպիսի հեղինակավոր կազմակերպություն-ներ, ինչպիսիք են.

- Հայկական բարեգործական ընդհանուր միությունը
- Հայ Օգնության Միությունը
- «Գ.Հովնանյան» Ընտանեկան հիմնադրամը
- Թուֆենկյան բարեգործական հիմնադրամը,
- «Ազնավուր» հիմնադրամը,
- Օրրան հիմնադրամը,
- «Դասավանդի՛ր, Հայաստան» կազմակերպությունը,
- «Էյ Թի Փի» կազմակերպությունը

«Կենաց ծառ» ուխտագնացության շրջանակում Արցախի ստեղծագործական խմբերի մասնակցությամբ Տաթևում և Հալիձորում անցկացվել են մի շարք ազգագրական մշակութային միջոցառումներ:

Նվիրատուների աջակցության շնորհիվ «Մենք ենք մեր սարերը» հոգացել է նաև այգու ապագայի մասին. ստեղծվել է կաթիլային ոռոգման համակարգ, որը սնուցելու է այգին՝ հետագայում ապահովելով բարձր բերքատվություն:

Ծրագրի իրականացման արդյունքում ստացված միջոցների մի մասն ուղղվել է Տաթևի վանքի կարիքներին: «Մենք ենք մեր սարերը» ապահովել է նաև **12 տաթևցի տղաների և աղջիկների** մասնակցությունը UWC Dilijan-ի կողմից կազմակերպված միջազգային ամառային ճամբարին: Ընդհանուր առմամբ, ծրագրի բյուջեն կազմել է մոտ **100,700 ԱՄՆ դոլար**: Ծրագրից օգտվել է **1062 մարդ:**

5 ՖՐԱՆՍԵՐԵՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2024 թվականի մարտ-հունիս ամիսներին Երևանի Միսակ Մանուշյանի անվան թիվ 48 հիմնական դպրոցում կազմակերպվել են ֆրանսերենի լրացուցիչ պարապմունքներ Արցախի 4-9-րդ դասարանների աշակերտների համար, ովքեր բռնի տեղահանվելուց հետո հաստատվել են Երևանում և ընդունվել ֆրանսերենի խորացված ուսուցմամբ դպրոց: Ծրագիրը պիլոտային էր և նպատակ ուներ օգնել Արցախից բռնի տեղահանված երեխաներին լրացնել շրջափակման և տեղահանության հետևանքով բաց թողնված դասերը, յուրացնել նոր ուսումնական նյութը և հետևել դպրոցական ծրագրին:

Դասընթացները կազմակերպվել են արցախցի **24 դպրոցականների** համար, երկու տարիքային խմբերով՝ 3-5-րդ և 6-9-րդ դասարաններում սովորողների համար: Դասերը վարում էին դպրոցի ֆրանսերենի ուսուցիչները:

Ուսուցիչների և ծնողների հավաստմամբ, ֆրանսերենի արտադասարանական պարապմունքներն արդյունավետ են և շատ օգնում են երեխաներին լեզուն սովորելու հարցում: Արցախցի երեխաների համար կազմակերպված լրացուցիչ դասընթացը նրանց նաև հարազատ միջավայրի զգացում է տվել՝ նպաստելով երեխաների հուզական բարեկեցությանը:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է մոտավորապես **3,200 ԱՄՆ դոլար**:

Սոնա Կալենջյան

Սոնա Կալենջյան Երևանի թիվ 48 դպրոցի ֆրանսերենի ուսուցչուհի

«Երբ 2023 թվականի հոկտեմբերին արցախցի երեխաները եկան մեր դպրոց, նրանցից շատերը ֆրանսերեն չգիտեին: Լրացուցիչ պարապմունքները և ամառային դպրոցն օգնեցին երեխաներին զգալիորեն նվազեցնել գիտելիքների բացը և հասնել իրենց դասընկերներին ֆրանսերենի իմացության առումով: Ես տեսնում եմ նաեւ, թե որքան երջանիկ են արցախցի երեխաները, որ հնարավորություն ունեն միմյանց տեսնելու, միասին սովորելու»:

Ծրագրի հաջողությունը ոգեշնչել է կազմակերպիչներին նախաձեռնել նաև «Զվարճալի ֆրանսերեն» ամառային պրակտիկ դասընթացը, որում, բացի Մ. Մանուշյանի անվան դպրոցի աշակերտներից, ընդգրկված էին նաև արցախցի աշակերտներ Երևանի ֆրանսերեն դասավանդող այլ դպրոցներից: Ընդհանուր առմամբ ծրագրի շահառու է դարձել **36 արցախցի երեխա**:

Դասընթացը կազմակերպվել է Երևանի Երազ այգում: Ծրագիրը ներառում էր զվարճալի ուսումնական գործողություններ՝ ներառյալ ֆրանսերեն խաղեր, երգեցողություն, բանավոր դերախաղ, գրավոր վարժություններ և այլն: Երեխաներին տրամադրվել է նաև սնունդ: Ծրագրի արժեքը կազմել է մոտ **6,300 ԱՄՆ դոլար**: Ծրագիրն իրականացվել է **«Սատար Արցախին» միության (Association de Soutien à l'Artsakh)** և այլ անհատական նվիրատվությունների շնորհիվ:

«TATEV CAVE GARDEN»: ՆՈՐ ՇՈՒԿԱ ՏԱԹԵՎՈՒՄ

2024 թվականի չորրորդ եռամսյակում Գործակալությունը սկսել է աշխատանքները Տաթև համայնքում գյուղատնտեսական, հուշանվերների և արհեստագործական ապրանքների շուկա ստեղծելու նոր նախագծի մշակման ուղղությամբ:

«TATEV CAVE GARDEN» նախագիծը նպատակ ունի ստեղծել յուրահատուկ շուկա, որը կդառնա Տաթև համայնքի մշակույթի և տնտեսության կարևոր մասը: Տաթևի նոր շուկայի ճարտարապետական հայեցակարգը ներշնչված է Սյունիքի պատմական քարանձավային բնակավայրերից: Այս տարածքը կմիավորի մշակութային ժառանգությունը, նորարար ճարտարապետությունը և բնական ներդաշնակությունը: Մենք ձգտում ենք ստեղծել մի վայր, որը կծառայի ոչ միայն որպես առևտրի կենտրոն, այլև որպես հաղորդակցության, ոգեշնչման և բարգավաճման տարածք ինչպես տեղացիների, այնպես էլ զբոսաշրջիկների համար:

Ծրագիրն առաջին նվիրատվությունը՝ **100,000 ԱՄՆ դոլար, ստացել է Էրիկ և Մելինա Իսրայելյաններից**: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2025 թվականին:

7 ՆՎԻՐԻՐ ՏՈՆ. ՆՈՐ ՏԱՐԻՆ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների նախաշեմին «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը իրականացրել է «Նվիրիր տոն» նախագիծը՝ ուղղված Արցախից բռնի տեղահանված և ներկայումս Գյումրիում բնակվող երեխաներին աջակցությանը: Միջոցառումը կազմակերպվել էր երեխաների համար ուրախ մթնոլորտ ստեղծելու և նրանց հոգեբանական վերականգնումն ու նոր միջավայրին ինտեգրումը խթանելու նպատակով:

Ծրագիրն իրականացվել է 2024 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2025 թվականի հունվարի 6-ը գործընկերների աջակցությամբ, այդ թվում՝ Զբոսաշրջության և քաղաքաշինության հիմնադրամի (TUF) և Գյումրիի «TOON ARMENI»-ի: Միջոցառմանը մասնակցել են Արցախից բռնի տեղահանված ընտանիքների **ավելի քան 140 երեխաներ:**

Ծրագրի մասնակիցներին հնարավորություն է տրվել օգտվելու քաղաքի ամանորյա ենթակառուցվածքից, ներառյալ սահադաշտը, սահնակները և Ձմեռ Պապի տունը: Դա նրանց համար դարձել է ոչ միայն հանգստի, այլև սոցիալական հաղորդակցության կարևոր մաս:

Ծրագրի բյուջեն կազմել է **2,431 ԱՄՆ դոլար**:

ՈՒՂԻՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հատուկ սոցիալական դեպքերում գործակալությունն ուղղակի ֆինանսական աջակցություն է ցուցաբերել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց՝ պրոթեզավորման կարիք ունեցող հաշմանդամի, Սյունիքում և Արագածոտնում բազմազավակ ընտանիքների, ինչպես նաև սոցիալական այլ խմբերի մարդկանց: Վերոնշյալ ծրագրերին հատկացված միջոցները կազմել են մոտավորապես **7,600 ԱՄՆ դոլար**:
- Գործակալությունն ակտիվորեն մասնակցել է մի շարք հասարակական նախաձեռնությունների, որոնք ուղղված են եղել Բաքվի բանտում ապօրինի պահվող Ռուբեն Վարդանյանի և այլ հայ բանտարկյալների իրավունքների պաշտպանությանը:
- «Մենք ենք մեր սարերը» գործակալության և «Սատար Արցախին» միության (Ֆրանսիա) համագործակցության շրջանակում, վերջինիս հրավերով գործակալության ներկայացուցիչներ Նարինե Աղաբալյանը և Սոնա Հովհաննիսյանը Ֆրանսիայի Սենատում մասնակցել են **«Համախմբում հանուն Հայաստանի և ի աջակցություն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների»** թեմայով սեմինարին: Հայաստանում ապաստանած արցախցիներին ցուցաբերվող աջակցության համակարգման հարցերի քննարկմանը մասնակցել են Արցախից բռնի տեղահանվածներին աջակցող ֆրանսիական կառույցների ներկայացուցիչներ, ինչպես նաև բարձրաստիճան դիվանագիտական պաշտոնյաներ:

- Հաշվետու ժամանակաշրջանում Գործակալությունն աշխատել է նաև կազմակերպության կայունության, հաշվետվողականության և նորարարական կարողությունների ամրապնդման ուղղությամբ՝ օգտագործելով STRIVE ծրագրի շրջանակներում Մերձավոր Արևելքի հիմնադրամից ստացված դրամաշնորհը: Մասնավորապես, պատրաստվել են կազմակերպության գործունեության վերաբերյալ շնորհանդեսային մուլտիմեդիա նյութեր, տեղի է ունեցել «Միասնության Ամանոր» միջոցառումը, որին ներկայացվել կողմից իրականացվող նախագծերն ու ծրագրերը:են գործակալության

Ամփոփելով 2024 թվականի արդյունքները՝ կարող ենք փաստել, որ այն կազմակերպության համար եղել է մարտահրավերների հաղթահարման, բայց նաև աճի, նոր գաղափարների և հաջողված նախագծերի տարի:

ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՊԼԱՆՆԵՐԸ

Այսպես, 2024 թվականին «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը իր գործընկերների հետ իրականացրել է մոտ **350,000 ԱՄՆ դոլար** արժողությամբ ծրագրեր և նախագծեր, որոնք ազդել են Հայաստանի տարբեր մարզերի մոտ **9,000 մարդկանց կյանքի վրա:**

ԾՐԱԳԻՐ	ԱՄՆ դոլար	ՏԵՂԱՆՔԸ	ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ	ՈՒՂՂԱԿԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՑԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ	90 051	Երևան և շրջաններ	362	89
«ԹԵՎԵՐ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ	109 370	Դիլիջան, Գյումրի	750	222
«ԿԵՆԱՑ ԾԱՌ». ՏԱԹԵՎՈՒՄ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ ՀԻՄՆՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ	100 667	Տաթև	7 250	1 062
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ «Leaders2Leaders»	22 855	Երևան	135	30
«TATEV CAVE GARDEN»: ՆՈՐ ՇՈՒԿԱ ՏԱԹԵՎՈՒՄ	6 997	Տաթև		
ՆՎԻՐԻՐ ՏՈՆ. ՆՈՐ ՏԱՐԻՆ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ	2 521	Գյումրի	450	142
ՖՐԱՆՍԵՐԵՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	3 187	Երևան	108	24
«ՁՎԱՐԾԱԼԻ ՖՐԱՆՍԵՐԵՆ» ԱՄԱՌԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	6 255	Երևան	130	36
ՈՒՂԻՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7 561	Տաթև, Երևան, Գեղարքունիք	25	25
ԸՆԴԱՄԵՆԸ	349 464		9 210	1 630

Երախտագիտությամբ նշում ենք, որ ամբողջ աշխատանքն իրականացվել է բազմաթիվ երկրներից գործակալության աջակիցների (գործընկերներ, դոնորներ) ֆինանսական նվիրատվությունների կամ նյութատեխնիկական աջակցության շնորհիվ, ինչպիսիք են **Association de Soutien à l'Artsakh (Ֆրանսիա), Էրիկ և Մելինա Իսրայելյանները, Liga Insurance ICJSC-ն, Ավետ Միրաքյանը, Կարեն Խաչանովի ընտանիքը (Հ.Մ.Ը.Մ Գլենդել Արարատի միջոցով), «ԴԱՐ» Կրթության աջակցության բարեգործական հիմնադրամը (Ռուսաստան), Էդուարդ Հարությունյանը, «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկությունը», Կարեն Սարկիսովը և շատ ուրիշներ (ցուցակը կցվում է):**

Առանձնահատուկ երախտագիտություն ենք հայտնում Ռուբեն Վարդանյանի ընտանիքին՝ հատկապես իրենց համար այս դժվարին ժամանակահատվածում «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությանը ցուցաբերած անգնահատելի աջակցության համար:

2025-Ի ՊԼԱՆՆԵՐԸ

2025 թվականին «Մենք ենք մեր սարերը» գործակալությունը մտադիր է կենտրոնանալ երկարաժամկետ զարգացման ծրագրերի վրա՝ մասնավորապես մարդկային կապիտալի զարգացման, Արցախի մշակութային ժառանգության պահպանման և Տաթևի տարածքային զարգացման, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման միջոցով Գործակալության ծրագրերի կայունության բարձրացման ոլորտներում:

Կարևորելով Արցախի մշակութային ժառանգության պահպանումը, Գործակալությունը, «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկության» աջակցության շնորհիվ սկսել է Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման առցանց հարթակ ստեղծելու նոր նախագիծ:

2025 թվականի առանցքային ծրագրերից է լինելու Տաթևում նոր շուկայի ստեղծումը, որը նաև ուղղված է Ռուբեն Վարդանյանի՝ Տաթևի վերածննդի տեսլականի իրականացմանը:

Ամենամյա ուխտագնացությունը դեպի Տաթևի վանք՝ մայիսի վերջին, կդառնա ոչ միայն հոգևոր իրադարձություն, այլև կծառայի Տաթևի վերածննդին և տնտեսական կայունությանը: Այս հոգևոր ճամփորդությունը համախմբելու է հավատացյալներին, մշակութային գործիչներին և ձեռներեցներին, ովքեր ձգտում են պահպանել և զարգացնել տարածաշրջանի յուրահատուկ ավանդույթներն ու սովորույթները:

Ստորև ներկայացված են 2025 թվականի համար նախատեսված հիմնական նախագծերը.

ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդկային կապիտալի զարգացում

- **«Թևեր».** 3-ամսյա վերականգնողական ծրագիր տեղահանված երեխաների և նրանց ընտանիքների համար
- **«Թևեր բոլորի համար».** Ձեռներեցության զարգացում տեղահանվածների և տեղի ընտանիքների համար Սյունիքում
- **«Պահանջարկ ունեցող ոլորտներում զբաղվածության ուսուցում».** Դասընթաց տեղահանված արցախցիների համար
- **«Ծնվել եմ Արցախում».** Կրթական ծրագիր Արցախի տաղանդավոր երիտասարդ երաժիշտների համար
- **«Աջակցություն արցախցի վարպետներին».** Ծրագիր Արցախից տեղահանված արհեստավորների համար
- **«Ֆրանսերենի ուսուցում».** կրթական ծրագիր արցախցի դպրոցականների համար

Ազգային ինքնության և մշակութային ժառանգության պահպանում

- **«Կենաց ծառ».** ուխտագնացություն Տաթևի վանք, համախմբում հոգևոր, ազգային արժեքների շուրջ
- **«Արցախի Տուն».** սոցիալ-մշակութային կենտրոնների ստեղծում Երևանում և Սյունիքում
- **Արցախի մասին, արցախյան բարբառով՝** ճանաչողական կարճ անիմացիոն ֆիլմերի արտադրություն
- **«Արցախի ոչ նյութական մշակույթի պահպանում».** թվային հարթակի ստեղծում

Տարածքային զարգացում

- **"TATEV CAVE GARDEN".** Նոր շուկայի ստեղծում Տաթևում
- **Սոցիալական Ձեռնարկատիրություն.** Տաթևի նոր այգու հումքի օգտագործմամբ միկրոարտադրության խթանում

Մենք մեր անկեղծ շնորհակալությունն ենք հայտնում բոլոր նվիրատուներին իրենց աջակցության համար, ինչպես նաև մեր բոլոր գործընկերներին և համախոհներին, ում ջանքերը դարձել են հիմք մեր հաջողությունների համար:

Անկեղծ հույս ունենք, որ կկարողանանք իրականացնել բոլոր նախատեսված ծրագրերը մեր կազմակերպության հիմնադիր Ռուբեն Վարդանյանի մասնակցությամբ և ներկայությամբ:

2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ

Աբրահամ Արթաշեսյան
Աբրահամ Մուրադյան
Ագատա Սաֆարյան
Ազատուհի Հովսեփյան
Ազգային հիփոթեկային ընկերություն
Ազնավուր հիմնադրամ
Աիդա Վարդանյան
Ալան Ուայթհորն
Ալբերտ Սարգսյան
Ալենա և Արեգ Վերդիյան
Ալեսիա Ավետիսյան
Ալեքսանդր Կիմ
Ալեքսանդր Կորոլև
Ալեքսանդր Մերզլենկո
Ալեքսանդր Մուրադյան
Ալեքսանդր Յուշկևիչ
Ալեքսանդր Պողոսյան
Ալեքսանդր Ֆրոլով
Ալեքսեյ Անիշենկո
Ալեքսեյ Կիրիչենկո
Ալեքսեյ Մեդվեդև
Ալեքսեյ Մուրզին
Ալեքսեյ Տրուբեցկոյ
Ալինա Կտոյան
Ալինա Ռիցցո
Ալլա Դանիելյան
Ալլա Մինգալյովա
Ալյոնա Դոլեցկայա
Ալվարդ Ավանեսյան
Աղավնի Եղիազարյան
Ամալյա Չոբանյան
Ամալյա Չոբանյան
Ամիրջան Գևորգյան
ԱՅԴԻ Բանկ ՓԲԸ
Անահիտ Աբովյան
Անահիտ Ասիրյան
Անահիտ Դաշյան
Անահիտ Դասսե Տեր-Մեսրոպյան
Անահիտ Զաքարյան
Անահիտ Խաչատրյան
Անահիտ Կոստանդյան
Անահիտ Կորկոտյան
Անահիտ Մարտիրոսյան
Անաստաս Օգանով
Անաստասիա Լազիբնայա
Անաստասիա Տիտովա
Անդրանիկ Սարգսյան
Անդրեյ Շարոնով
Անդրեյ Վլադիմիրով
Անժելա Մովսեսյան
Անի Ապիտոնյան
Անի Ապրեսյան
Անի Աֆրիկյան
Անի Բաբայան
Անի Դավթյան
Անի Եղիազարյան
Անի Խաչյան
Անի Հայրապետյան
Անի Հարությունյան
Անի Ձավարյան
Անի Մնացականյան
Անի Մուրադյան
Աննա Բաբայան
Աննա Գրիգորյան
Աննա Դանիելյան
Աննա Կարցևա
Աննա Կոստանդյան
Աննա Հարությունյան
Աննա Սարգսյան
Աննա Վեդերնիկովա
Աննա Օհանյան
Անուշ Աթաբեկյան
Անուշ Ավանեսյան
Անուշ Գևորգյան
Անուշ Ղալայան
Անուշ Մանուչարյան
Անուշիկ Դոլինյան
Անտոն Մանյաշին
Անտուան Թոնի Ռ. Հալէպլի
Աշխեն Մեսրոպյան
Աշոտ Բաբլումյան
Աշոտ Բաղդասարյան
Աշոտ Խրիմյան
Աշոտ Մկրտչյան
Աշոտ Ձիվանյան
Աշոտ Փիրվերդյան
Առնո Մոսիկյան
Աստղիկ Սարգսյան
Աստղիկ Փաշայան
Աստղինե Խաչատրյան
Ավետ Միրաքյան
Ավետիս Բարսեղյան
Ավետիս Բոյամյան
ԱՐ բարեգործական հիմնադրամ
Արա Ախոյան
Արա Բաբլոյան
Արա և Քրիստինա Աբրահամյան
Արա Ինիզան
Արա Կրիկորյան
Արա Հակոբյան
Արա Մարգարյան
Արա Սարգսյան
Արա Տանակ
Արամ Ադուրյան
Արամ Գրիգորյան
Արամ Սաֆարյան
Արարատ Անտոնյան
Արարատ Անտոնյանի ընտանիք
Արարատ Դալլաքյան
Արարատ Մկրտչյան
Արարատ Պետրոսյան
Արաքս Առաքելյան
Արեգ Ղազարյան
Արեգ Նավասարդյան
Արեգ Վերդիյան
Արեն Ապիկյան
Արեն Գրիգորյան
Արես Մանուկյան
Արետ Վարժապետյան
Արևիկ Պետրոսյան
Արթուր Աթանեսյան
Արթուր Ալավերդյան
Արթուր Ամիրխանյան
Արթուր Անդրեասյան
Արթուր Առաքելյան
Արթուր Գրիգորյան
Արթուր Լազարյան
Արթուր Կուրգինյան
Արթուր Մկրտչյան
Արթուր Մուրադյան
Արթուր Սարգսյան
Արիս Ղազինյան
Արկադի Մանուկյան
Արման Բայրամյան
Արման Հակոբջանյան
Արման Ձիլավյան
Արման Սիմոնյան
Արման Վոսկերչյան
Արման Տեր-Կյուրեղյան
Արմեն Ալավերդյան
Արմեն Ասլանյան
Արմեն Գասպարյան
Արմեն Գարսլյանի ընտանիք
Արմեն Գևորգյան
Արմեն Դավիթյան
Արմեն Կարապետյան
Արմեն Հակոբյան
Արմեն Ղազարյան
Արմեն Մանգասարյան
Արմեն Մեհրաբյան
Արմեն Մինասյան
Արմեն Պառավյան
Արմեն Պետրոսյան
Արմեն Սարգսյան
Արմեն Վաչենանց
Արմեն Օրուջյան
Արմեն Ֆրանգուլյան
Արմենիո Քեռլսեյան
Արմենուհի Հովակիմյան
Արմինա Մանուկյան
Արմինե Բազեյան
Արմինե Բիբիլյան
Արմինե Հովհաննիսյան
Արմինե Ղազարյան
Արմինե Մագումյան
Արմինե Սահակյան
Արմինե Օսիպյան
Արշակ Խուդավերդյան
Արսեն Աբրահամյան
Արսեն Ամիրջանյան
Արսեն Հայրիյան
Արսեն, Ռիմմա, Մարինա, Օսկար Ա.
Արտակ Ազարյան
Արտակ Գրիգորյան
Արտակ Մարության
Արտաշես Հովհաննիսյան
Արտաշես Ղազախեցյան
Արտաշես Սիմոնյան
Արտուր Բաղդասարյան
Արփենիկ Ղահրիյան
Արփի Մխեյան
Արփի Չոբանյան
Արփինե Գրիգորյան
Արփինե Սովդագարովա
Աֆինա Կարապետյան

Բագրատ Ալեկյան
Բագրատ Մեհրաբյան
Բալասանյան ընտանիք
Բայսլանդ Հոլդինգս Լիմիթեդ
Բելլա Վարդանյան
Բորիս Ավետիսով
Գաբրիել Էռնեստո Աբադ Ֆերնանդես
Գագիկ Աղաբալյան
Գագիկ Մինասյան
Գագիկ Պետրոսյան
Գալինա Նեստերովա
Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ
Գայանե Աճեմյան
Գայանե Անթառանյան
Գայանե Առուշանյան
Գայանե Ավագյանց
Գայանե Թևոսյան
Գայանե Կիրնոսովա
Գայանե Մովսիսյան
Գայանե Մուրադյան
Գառնիկ Մելիքսեթյան
Գարեգին Դարբինյան
Գարեն և Ռիտա Սարաֆյան
Գարիկ Գևորգյան
Գարիկ Ղազարյան
Գարիկ Մարտիրոսյան
Գարիկ Սարոյան
Գարրի Գարանյան
Գենադի Տիմչենկո
Գեորգի Այվազով
Գեորգի Կևորկով
Գեորգի Սարուխանյան
Գևիկ Բաղդասարյան
Գևորգ Գևորգյան
Գևորգ Մինասյան
Գևորգ Օհանյան
Գլեբ Գրոշենկո
Գոհար Գրեյան
Գոհար Ղարաբաղցյան
Գոհար Մարտիրոսյան
Գոհար Շահինյան
Գոռ Նազինյան
Գոռ Վերդյան
Գուրգեն Բուդաղյան
Գուրգեն Եսայան
Գուրգեն Հակոբյան
Գուրգեն Հովհաննիսյան
Գրետա Հարությունյան
Գրիգորի Երիցյան
Գրիգորի Մարտիրոսյան
Դանիել Դարբինյան
Դանիել Տոնոյան
Դավիթ Աբրահամյան
Դավիթ Ագիյան
Դավիթ Ադամյան
Դավիթ Գաբրիելյան
Դավիթ Գորոդյանսկի
Դավիթ Կարապետյան
Դավիթ Հարությունյան
Դավիթ Յավրուլյան
Դավիթ Շահնազարյան
Դավիթ Սարգսյան
Դավիթ Վարդանյան
Դեզդեմոնա Ասցատրյան
Դենիս Իլյաշով
Դէվիդ Պարոնյան
Դիանա Աղաբեկյան
Դիանա և Չարլզ Մխիթարյան
Դիանա Սարդարյան
Դիլիջանի համայնքային կենտրոն
Դիլիջանի միջազգային դպրոց
Դիրան Դեպանյան
Դիրոն Ձեբեջյան
Դմիտրի Լիսիչենկո
Դմիտրի Կուրբատսկի
Դմիտրի Յակուշկին
Դմիտրի Ռոգով
Ելենա Աբովյան
Ելենա Խաչվանքյան
Ելենա Կոմոցկովա
Ելենա Հակոբյան
Ելենա Մակարովա
Ելենա Մանուկյան
Ելենա Մուրադյան
Ելենա Շիգինա
Ելենա Պոպովա
Ելենա Տիմաշևա
Ելենա Օրլովա
Եկատերինա Յարովայա
Եկատերինա Ցիրյուլնիկովա
Եվա Կիրխմայեր Բիլիչ
Եվա Մարտիրոսյան
Եվա Սաֆարյան
Եվգենի Կուլիկ
Եվգենի Վարդանյան
Եվգենիա Բելյաևա
Եվգենիա Եսինա
Եվգենիա Պատուրյան
Եվգենիյա Պատուրյան
Զառա և Սուրեն Ամիրբեկյան
Զառա Ղազարյան
Զառա Վանցյան
Զառա Օհանյան և Կարեն Մինասյան
Զարուհի Հայրապետյան
Զարուհի Օհանյան
Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ (ՏՈՒՖ, անձնակազմից)
Զոհրաբ Մնացականյան
Զոյա Բարսեղյան
Զորայր Սարգսյան
Զուրաբ Երմիլով
Էդգար Սնդոյան
Էդուարդ Գևորգյան
Էդուարդ Հարությունյան
Էդուարդո Էռնեկյան
Էդվին Վարդազարյան
Էլեոնորա Մալխասյան
Էկատերինա Իսախանովա
Էմին Ավետիսյան
Էմմա Հովհաննիսյան
Էյ Սեքյուրիթի ՓԲԸ
Էնթոնի և Նենսի Բարսամյան
Էնջի Էնդ Ուայ ապահովագրական ընկերություն
Էրիզ Գրուպ ԲԲԸ
Էրիկ և Մելինա Էսրայելյաններ
Էրիկ Հայրապետյան
Էրիկ Մովս
Էրիկ Օբերմայեր
Էփրիքոթ Կապիտալ ՓԲԸ
Թագուհի Պողոսյան
Թամարա Գևորգյան
Թիլման Դրոստե
Թիմոթի Նեթչբուլլ
Ժակլին Աբրամյան
Ժանա Անդրյան
Ժաննա Բարսեղյան
Ժաննա Իշխանյան
Ժաննա Օ'Քլերի
Ժուլնար Ասֆարի
Իգոր Ավանեսյան
Իգոր Բլինով
Իգոր Բորիսենկո
Իգոր Խալաթյան
Իգոր Մանդիկ
Ինա Մանդրե
Ինեսսա Ալմոյան
Ինեսսա Մելիքսեթյան
Իշխան Մարգարյան
Իվան Գուբոչկին
Իվան Իվանով
Իվոննա Ելիսեևա
Իրինա Կարիմովա
Իրինա Կուրանովա
Իրինա Հարությունյան
Իրինա Մենշենինա
Իրինա Շամիլովա
Իրինա Պավլովա
Իրմա Զամբակցյան
Լանա Վարդանյան
Լաուրա Շահնազարյան
Լարիսա Ավետիսյան
Լեյլա Նազարի
Լեոն Յակուբյան
Լեոնիդ Բոգուսլավսկի
Լեոնիդ Մինասյան
Լև Ավանեսով
Լևոն Ալթունյան
Լևոն Աղասյան
Լևոն Մանուչարյան
Լևոն Մարության
Լիանա Ասլիկյան
Լիանա Խուցիյան
Լիանա Յորդանյան
Լիաննա Հայրապետյան
Լիգա Ինշուրանս ԱՓԲԸ
Լիլիա Մկրտումյան
Լիլիթ Ադամյան
Լիլիթ Ասրյան
Լիլիթ Գյուլգյուլյան
Լիլիթ Համբարձումյան
Լիլիթ Հայրիյան
Լիլիթ Պետրոսյան
Լինդա Զամբակցյան
Լյուդմիլա Շահինյան
Լյուդմիլա Ստարոստովա
Լուիզա Հակոբյան
Լուսինե Ավանեսյան
Լուսինե Դարչինյան

Լուսինե Թորոյան
Լուսինե Մարտիրոսյան
Խաչատուր Դավլաթյան
Խարեն Մուսայելյան և Մարինե Մաուրեր
Ծովինար Խաչատրյան
Կամար Բիզնես Կենտրոն ՓԲԸ
Կարեն Աստաբաթյան
Կարեն Ավագումյան
Կարեն Գալուստյան
Կարեն Գասպարյան
Կարեն Գրիգորյան
Կարեն Դանիելյան
Կարեն Կարապետյան
Կարեն Ղազարյան
Կարեն Մոսոյան
Կարեն Սարկիսով
Կարինա Սլիպակովա
Կարինե Աբրամյան
Կարինե Անդրիասյան
Կարինե Ավագյան
Կարինե Գաբրիելյան
Կարինե Գրիգորյան
Կարինե Եղիազարյան
Կարինե Սելիմյան
Կարինե Քարամյան
Կիմ Իշխանյան
Կիրիլ Սոբոլև
Կոկա Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քոմփնի ՓԲԸ
Հակոբ Կիդիկյան
Հակոբ Պողոսյան
Հակոբ Սարգսյան
Հայ Օգնութեան Միութիւն
Հայկ Աբովյան
Հայկ Ալոյան
Հայկ Աղաբեկյան
Հայկ Անդրեասյան
Հայկ Ասլանյան
Հայկ Գյուզալյան
Հայկ Թադևոսյան
Հայկ Խանամիրյան
Հայկ Խաչատրյան
Հայկ Կարապետյան
Հայկ Մելքոնյան
Հայկ Մկրտչյան
Հայկ Շեկյան
Հայկ Պետրոսյան
Հայկական համայնք Անի-Արմենիա
Հասմիկ Թովմասյան
Հասմիկ Կոլոյան
Հասմիկ Հայրապետյան
Հասմիկ Հարությունյան
Հասմիկ Սահակյան
Հասմիկ Վարդանյան
Հարոլդ Թակուշյան
Հարություն Պողոսյան
Հեղինե Հարությունյան
Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն ՓԲԸ
Հերբերտ Տոնոյան
Հիլդա Յակուբյան
Հովիկ Գաբրիելյան
Հովհաննես Թումանյանի թանգարան
Հովհաննես Մոկացյան
Հովհաննես Մոկացյան և Իլոնա Հոֆմանն
Հովնան Լալայան
Հովսեփ Ասատրյան
Հրանտ Ամիրյան
Հրանտ Գալուստյան
Հրանտ Դանդուրով
Հրանտ Զոհրաբյան
Հրաչյա Մինասյան
Մադլեն Մինասյան
Մայա Մինասյան
Մայրո ՍՊԸ
Մանե Սահակյան
Մանիկ Կարապետյան
Մանուկ Սարգսյան
Մանուշ Առուստամյան
Մանուշակ Աղասյան
Մանվել Աբրահամյան
Մանֆրեդ Կետս Դե Վրիես
Մասիս Առաքելյան
Մատենադարան՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Հին Ձեռագրերի Գիտահետազոտական Ինստիտուտ
Մարատ Մուրադյան
Մարգարիտա Վարդանյան
Մարի Զիբինա
Մարիա Ամիրյան
Մարիա Բուկլե
Մարիա Ժոգ
Մարիա Կոգան
Մարիա Շվինդտ
Մարիա Սանզ Ասրյան և Անի Սանզ Ասրյան
Մարիա Սոբոլևա
Մարիա Վասիլկովա
Մարիա Վոլոդինա
Մարիա Ցիպինա
Մարիամ Մանուկյան
Մարիամ Մելիք-Քարամյան
Մարիամ Պողոսյան
Մարիետա Միքայելյան
Մարինա Աբրահամյան
Մարինա Գորդեյչուկ
Մարինա Ենգիբարյան
Մարինա Պողոսյան
Մարինե Ալես
Մարինե Բաբայան
Մարինե Դավթյան
Մարինե Միրիջանյան
Մարուսյա Ապերյան
Մարտին Մինասյան
Մաքսիմ Բերլովիչ
Մաքսիմուս Մինասյան
Մերձավոր Արևելքի Հիմնադրամ (ԱՄՆ)
Միխայիլ Այանյան
Միխայիլ Բուտյուգին
Միխայիլ Բրոյթման
Միխայիլ Խաջաբեկյան
Միխայիլ Վիներ-Բիկովսկի
Միխայիլ Վորոնին
Միխայիլ Տիխոմիրով
Միշել Գյուլնազարյան
Միքայել Արսենյան
Միքայել Տեր-Սահակյան
Մհեր Մաթևոսյան
Մոնիկա Անտոնյան
Ցանա Կոստանդյան
Ցարո և Անաստասիա Զաբավսկի
Յուլիա Լևի Նիկիտինա
Յուլիա Կալուգինա
Յուլիա Մարտիրոսյան
Յուլիա Պացեյա
Յուլիա Ռատովա
Յուլիա Ռեյսներ
Յուլիա Վախիդովա
Յուրգ Հալլեր
Նաիրի Ադամյան
Նախշուն Ավանեսյան
Նանա Հովհաննիսյան
Նանա Նազարյան
Նանե Հայրապետյան
Նատալի Ավագյան
Նատալյա Ցիվիլյուկ
Նարա Կարսենց
Նարե Լևոնյան
Նարեկ Գաբրիելյան
Նարեկ Հայրիյան
Նարեկ Ղարիբյան
Նարինե Աղաբալյան
Նարինե Ասլանյան
Նարինե Բաղալյան
Նարինե Իսահակյան
Նարինե Հարոյան
Նարինե Քարամյան
Նարինե Օկոնյան
Նելլի Հարությունյան
Նելլի Մանուկյան
Նելլի Մխիթարյան
Նելլի Սերկիսյան
Նեքստ Ձեներեյշն Հիմնադրամ
Նժդեհ Իսկանդարյան
Նիկոլայ Գերասիմենկո
Նիկոլայ Շիրոյան
Նիկոլայ Սիդորով
Նիկոլայ Վերխովսկի
Նինա Զակոյան
Նոաս Չիլդրեն բարեգործական կազմակերպություն
Նորա Միրզոյան
Նորա Սերդանի
Նորայր Դավթյան
Նորայր Միքայելյան
Նորայր Մովսեսյան
Նորիկ Նազարյան
Նունե Ղորուխչյան
Շանթ Մարտիրոսյան
Շոշան Հարությունյան
Շուշան Հովհաննիսյան
Պարույր Դադայան
Պետրոս Հերգնյան
Պերճ Քիլաջյան
Պերճ և Մարգարետ Քիլաջյան
Պոլինա Լևինա
Պրինտ Ինֆո հրատարակչություն
Պրո ՖՄ ՍՊԸ

Ջեյմս Սմիթ
Ջերարդ և Էննի Քիլաջյան
ջի-ջի թիմ
Ջորջ Բաշիրյանց
Ջուլիա Միդդլթոն
Ռաֆայել Կարապետյան
Ռաֆիկ Հարությունյան
Ռաֆիկ Ներսիսյան
Ռեգինա Ժիենկուլովա
Ռեյչել Բասս
Ռիչարդ Շեմեսյան
Ռիչարդ Օգդոն
Ռյուրիկ Ինգրամ
Ռոաթնիկա Լիմ
Ռոբերտ Իշխանյան
Ռոբերտ Սադիխով
Ռոնալդ Ֆրիման
Ռուբեն Առուստամով
Ռուբեն Ենիկոլոպով
Ռուբեն Հայրապետյան
Ռուբեն Հարությունյան
Ռուբեն Օգանեսյան
Ռուբէն Ասատրյան
Ռուբինա Ալումյան
Ռուզան Գաբրիելյան
Ռուզաննա Բաղդասարյան
Ռուզաննա Հայրապետյան
Ռուզաննա Սարգսյան
Սաբինա և Մերի Ղարիբյան
Սաթենիկ Առաքելյան
Սաթենիկ Մուրադյան
Սալվադոր Պերես
Սահակյան ընտանիք
Սամվել Թավադյան
Սամվել Թերզիբաշյան
Սամվել Մարգարյան
Սամվել Վագրադյան
Սանյա Զեզյուլին
Սասուն Առաքելյան
Սատար Արցախին Միություն
Սարգիս Գաբրելյան
Սարկիսյան ՍՊԸ
Սեդա Համբարձումյան
Սենթ Սարգիս բարեգործական հիմնադրամ
Սերգեյ Ազատյան
Սերգեյ Ասատրյան
Սերգեյ Ասլանյան
Սերգեյ Բաղդասարյան
Սերգեյ Գրիգորյան
Սերգեյ Իվանով
Սերգեյ Խլուդեև
Սերգեյ Համբարձումյան
Սերգեյ Մկրտչյան
Սերգեյ Յագության
Սերգեյ Շահվերդյանի ընտանիք
Սերգեյ Ռյաբոկոբիլկո
Սերգեյ Սարկիսով
Սերգեյ Ստարչեուս
Սերգեյ Ֆիլիմոնով
Սերգիս Ծաղիկյան
Սերժ Կասպարյան
Սերժ Փանոսյան
Սերոբ Դեմիրճյան
Սէմյուել Դարբինյան
Սիլվա Բարսեղյան
Սիլվա Գաբրիելյան
Սիլվիա Նաջարյան Յակուբյան
Սիմոն Վիխին
Սիրանուշ Դվոյան
Սիրո Սիրեկան
Սլովո հրատարակչություն
Սյուզան Գասկել
Սյուզաննա Գրիգորյան
Սյուզի Նահապետյան
Սոնա Հովհաննիսյան
Սոնա Մելիք-Քարամյան
Սուսաննա Աղաջանյան
Սուսաննա Գյոզալյան
Սուրեն Ամիրբեկյան
Սուրեն Բարսեղյան
Սուրեն Բոխյան
Սուրեն Մելիքյան
Սուրեն Մելիք-Քարամյան
Սուրեն Պողոսյան
Սուրեն Տոնոյան
Սոֆիա Անդրիյանց
Սոֆիա Միրումյան
Սվետա Միրզոյան
Սվետլանա Բաղդասարյան
Սվետլանա Գրիգորյան
Սվետլանա Պոպովա
Սվետլանա Սավինա
Սվետլանա Վագրադյան
Ստեփան Գևորգյան
Ստեփան Հովակիմյան
Վադիմ Բալաշով
Վազգեն Գևորգյան
Վազգեն Յակուբյան
ՎԱԼ հիմնադրամ
Վալդայի մեխանիկական գործարան ՍՊԸ
Վալիկ Գրիգորյան
Վահագն Ամիրխանյան
Վահագն Մարտիրոսյան
Վահան Արզումանյան
Վահան Բաբլոյան
Վահան Զանոյան
Վահան Քալայջյան
Վահե Ղավալյան
Վահիկ և Էլիս Պետրոսյան
Վահրամ Չուգուրյան
Վաղարշակ Միքայելյան
Վան Գաբուդյան
Վաչե Ռուբենյան
Վաչե Սահակյան
Վասիլի Բարդադիմով
Վարանտ Զանոյան
Վարդան Դիլանյան
Վարդգես Հովասափյան
Վարդուհի Դադունց
Վարդուհի Ներսիսյան
Վարվարա Ուշակովա
Վերգինե Եսայան
Վերոնիկա Զոնաբենդ
Վիկա Բաղդասարյան
Վիկտորիա Գոռլաչևա
Վիկտորիա Պապիկյան
Վիտալի Անդրիյանց
Վլադիմիր Արեշյան
Վլադիմիր Բաղդասարյան
Վլադիմիր Գուսակով
Վլադիմիր և Արեգա Գասպարյան
Վլադիմիր Կոպտև
Վլադիմիր Չիրախով
Վլադիմիր Սմիրնով
Վյաչեսլավ Իշխանյան
Տաթև Շահնազարյան
Տաթև Պապոյան
Տաթևիկ Այվազյան
Տաթևիկ Մնոյան
Տաթևիկ Ջանոյան
Տանյա Ֆեստեքջյան
Տաշիր բարեգործական հիմնադրամ
Տատյանա Բելովա
Տատյանա Ժիլկինա
Տատյանա Ժիլկինա և Ելենա Կոմոցկովա
Տատյանա Լոպարևա
Տատյանա Պրոնինա
Տիգրան Բաբայան
Տիգրան Բունիաթյան
Տիգրան Դանիելյան
Տիգրան Զոհրաբյան
Տիգրան Թումանյան
Տիգրան Խրիմյան
Տիգրան Մատինյան
Տիգրան Մնացականյան
Տիգրան Ձրբաշյան
Տիգրան Սահակյան
Տիգրան Սաֆարյան
Տոմիսլավ Սարադին
Ռաֆֆի Երեցյան
Փրոփերթի Դեվելոփմենթ Քոմփանի ՓԲԸ
Քեյն Օքերման Սարգսյան
Քերոլայն Քոքս (Բարոնուհի)
Քսենիա Բելկինա
Քրիս Կիբարյան
Քրիստիան Սոլիդարիտի Ինտերնեյշնլ
Քրիստինե Արշակյան
Քրիստինե Գևորգյան
Քրիստինե Սարգսյան
Քրիստոֆ Բոշ
Օլգա Կիսիմա
Օլգա Պեստովա
Օլգա Պողոսյան
Օլգա Սուշինա
Օլգա Սուրիկովա
Օլեգ Կոլեսնիկ
Օլեգ Պուխով
Օլեսյա Ավետիսյան
Օլեսյա Կուդուխովա
Օհանյան Բրենդի Կոմպանի ՓԲԸ
Օնիկ Ազնաուրյան
Օրրան Բարեգործական ՀԿ
Օքսանա Աբրահամյան
Օքսանա Բեսեդինա
Ֆաինա Սեյրանյան
Ֆամի Գրուպ